ՔԱՂՎԱԾՔ
«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝
2023 թվականի փետրվարի 28-ի, ժամը 14:00-ի նիստի
N 5 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ.- Դոցենտի գիտական կոչում հայցելու նպատակով գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկությանը մասնակցելու համար **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի կառավարչական հաշվառման և աուդիտի ամբիոնի դասախոս, տնտեսագիտության թեկնածու Դիանա Սիմոնի Մինասյանի** ռեկտորին ուղղված դիմումի մասին հարցը:

Զեկուցող՝ գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովի նախագահ, հասարակագիտության ամբիոնի պրոֆեսոր, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, «ՀՊՏՀ ամբիոնի պատվավոր վարիչ» **Ա.Հ.Սարգսյան**:

Զեկուցողը նշեց. Դ.Ս.Մինասյանը 2013 թվականի սեպտեմբերի 2-ից առ այսօր աշխատում է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի կառավարչական հաշվառման և աուդիտի ամբիոնում. նախ՝ 02.09.2013 - 01.07.2014՝ դասախոս (համատեղությամբ), 01.09.2014 - 01.07.2020՝ ասիստենտ (համատեղությամբ), 01.09.2020 - 31.08.2021՝ ասիստենտ (հիմնական հաստիքային աշխատող), 01.09.2021 - 31.03.2022՝ դասախոս (հիմնական հաստիքային աշխատող), իսկ 2022 թվականի ապրիլի 1-ի՝ դասախոս (համատեղությամբ): Վերջին 3 ուսումնական տարվա ընթացքում անընդմեջ իրականացրել է հայցվող գիտական կոչման մասնագիտությանը համապատասխան գիտամանկավարժական գործունեություն:

2013 թվականին Դ.Ս.Մինասյանը պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և ՀՀ ԲՈՀ-ի (ներկայում՝ ՀՀ ԲՈԿ) կողմից նրան շնորհվել է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան: Նա հրատարակել է 8 գիտական աշխատանք: Թեկնածուական ատենախոսություն պաշտպանելուց հետո տվյալ բնագավառում ունի հրատարակված ինչպես գիտական, այնպես էլ ուսումնամեթոդական աշխատանք, որոնց ընդհանուր թիվը 4 է (1 ուսումնական ձեռնարկ, 3 գիտական հոդված՝ տպագրված միջազգային գիտական ամսագրերում՝ համահեղինակությամբ):

Դ.Ս.Մինասյանը դասախոսությունները կարդում է տեսական ու գործնական բարձր մակարդակով՝ հաշվի առնելով ժամանակակից պայմաններում շուկայական տնտեսության առանձնահատկությունները: Վայելում է պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների սերն ու հարգանքը:

Կառավարչական հաշվառման և աուդիտի ամբիոնը և գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովը միաձայն երաշխավորել են

Դ.Ս.Մինասյանին մասնակցելու Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկությանը դոցենտի գիտական կոչում հայցելու նպատակով:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.-

Պրոֆեսոր Դ.Ռ.Գալոյանը:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ գիտական խորհուրդը որոշեց Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի կառավարչական հաշվառման և աուդիտի ամբիոնի դասախոս, տնտեսագիտության թեկնածու Դիանա Սիմոնի Մինասյանի թեկնածությունը դնել գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկությանը՝ դոցենտի գիտական կոչում հայցելու նպատակով (որոշումն ընդունվեց բաց քվեարկությամբ, միաձայն. կողմ՝ 52, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Քվեարկության արդյունքներն են. գիտական խորհրդի 60 անդամից նիստին և քվեարկությանը մասնակցել են 52-ը: Փակ գաղտնի քվեարկության արդյունքներն են. կողմ՝ 52, դեմ՝ 0, անվավեր քվեաթերթիկ՝ 0:

ՈՐՈՇԵՑԻՆ.- **1.** Հաշվի առնելով, որ **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի կառավարչական հաշվառման և աուդիտի ամբիոնի դասախոս, տնտեսագիտության թեկնածու Դիանա Սիմոնի Մինասյանի** կատարած գիտամանկավարժական աշխատանքը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հուլիսի 9-ի N 615 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու կարգի» (խմբ. 17.02.2022 թ. N 177 - Ն) 2-րդ գլխի 5-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջներին՝ **Դիանա Սիմոնի Մինասյանին** շնորհել **դոցենտի** գիտական կոչում **«Տնտեսագիտություն»** բնագավառի **Ը.00.03՝ «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում»** մասնագիտությամբ:

2. Միջնորդել Հայաստանի Հանրապետության բարձրագույն որակավորման կոմիտեին՝ հաստատելու համալսարանի գիտական խորհրդի որոշումը:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Ռ. Գալոյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝ **Ն. Հ. Դարբինյան**

2023 թ. փետրվարի 28
Երևան